ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄԵՆԱՐԻՆԻ

Ethical vision,
Integrity in action

MENARINI group

Ներածություն

«Մենարինի Խմբի հարգելի անդամներ,

Ինչպես գիտեք, մենք ընտանիք ենք, որը խստորեն պահպանում է որակի ամենաբարձր չափանիշները և իր գործունեությունը ծավալում է մեր հիմնական արժեքներին համապատասխան, ներառյալ էթիկական մոտեցումը և թափանցիկությունը: Մեզանից յուրաքանչյուրը պարտավորվում է հետևել բոլոր օրենքներին և կանոնակարգերին, գործել բարեխղճորեն՝ բարձր էթիկական չափանիշներին համապատասխան: Այս էթիկական չափանիշները հիմնարար են մեր խմբի քաղաքականության համար՝ ապահովելով ընդհանուր հիմք գործընկերների հետ փոխգործակցության, գործընկերների և մատակարարների հետ բիզնես վարելու և ամբողջ աշխարհում հիվանդներին և համայնքներին ծառայություններ մատուցելու համար: Մենք ապավինում ենք Վարքագծի Կանոնագրքին Ձեր լիարժեք հավատարմությանը, որպեսզի հետագայում մենք շարունակենք լինել վստահելի ընտրություն մեր գործընկերների համար»:

Elcin Barker Ergun

01

ԷԹԻԿԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

7 Նպատակ

8 Մասնակիցներ

8 Ինչու ենք մենք սահմանում մեր գործողությունները կարգավոր սկզբունքներ և կանոններ

8 Ղեկավարության նվիրվածություն և պատասխանատվություն

9 Պատասխանատվություն և օրենքների և կանոնների պահպանում

02

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԲԻԶՆԵՍԻ ՄԵՋ

11 Կաշառքի անթույլատրելիություն

13 Փոխգործակցություն բուժաշխատողների հետ (HCPs)

14 Առաջխաղացման (խթանման) գործունեություն և գիտական փոխանակում

14 Նվերներ, հյուրընկալություն և հարակից ծախսեր

15 Շահերի բախում

16 Մատակարարների ընտրություն և գնումներ

17 Մրցակցություն և բարեխղճություն

18 Միջազգային առևտուր

18 Շրջակա միջավայրի պաշտպանություն

03

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

21 Մարդկային ռեսուրսներ

22 Ոտնձգությունների և խտրականության բացարձակ չընդունում

23 Արդար վերաբերմունք

23 Առողջություն և անվտանգություն

24 Մարդու իրավունքներ

25 Աշխատակիցների գաղտնիության իրավունք

25 Ներգրավման մշակույթ

26 Պատասխանատու հաղորդակցություն սոցիալական ցանցերում

04

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՎՐԱ

29 Բարեխիղճ վերաբերմունք հետազոտությունների և մշակումների նկատմամբ

30 Տվյալների հրապարակում

30 Մեր արտադրանքի որակը

31 Հիվանդի անվտանգություն

31 Անվտանգության մոնիտորինգ և հաշվետվություն

32 Տվյալների գաղտնիություն

05

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՐԵԽԻՂՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

35 Հաշվապահական հաշվառման մատյաններ, գրառումներ և ֆինանսական հաշվետվություններ

35 Մտավոր սեփականություն

36 Գաղտնի տեղեկատվություն

36 Կորպորատիվ ակտիվների պաշտպանություն

06

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

39 Քաղաքական ներդրումներ

39 Բարեգործական և սոցիալական ծրագրեր

40 Համագործակցություն իշխանությունների և հաստատությունների հետ

07

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

43 Իրազեկում

45 Կարգապահական տույժեր

45 Պաշտպանություն վրեժից

08

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

47 Կոնտակտային տվյալներ

01

ԷԹԻԿԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակ

Մասնակիցներ

Ինչու ենք մենք սահմանում մեր գործողությունները կարգավորող սկզբունքներ և կանոններ

Ղեկավարության նվիրվածություն և պատասխանատվություն

Պատասխանատվություն և օրենքների և կանոնակարգերի պահպանում



Նպատակ

Մենարինի Գրուպն ընդունել է իր Վարքագծի Կանոնագրքը («Կանոնագիրք»)՝ խթանելու էթիկական չափանիշները, ապահովելու օրենքների և կանոնների համապատասխանությունը և աջակցելու անհամապատասխան կամ անօրինական վարքագծի մասին տվյալների տրամադրումը: Մենարինի Գրուպի ընկերությունների կողմից կամովին ընդունված Կանոնագիրքը սահմանում է դրական սկզբունքներ և վարքագծի կանոններ՝ որպես աշխատակիցների, հիվանդների, բիզնես գործընկերների և ընդհանրապես հասարակության (այսինքն՝ շահագրգիռ կողմերի) հանդեպ մեր նվիրվածության կոնկրետ ապացույց:
Մեզանից յուրաքանչյուրի համար այս Կանոնագիրքը բարեխղճորեն գործելու հիմնական ուղեցույց է: Անգլերեն տարբերակի և թարգմանության միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Մասնակիցներ

Կանոնագիրքն անմիջականորեն վերաբերում է Մենարինի Գրուպ ընկերություններին, նրանց աշխատակիցներին, պաշտոնյաներին, ղեկավարներին, ինչպես նաև բիզնես գործընկերներին և բոլոր այլ անձանց, ովքեր գործնական հարաբերությունների մեջ են Մենարինիի հետ (բոլորը միասին անվանվում են «Մասնակիցներ» տերմինով):

Ինչո՞ւ ենք մենք սահմանում մեր գործողությունները կարգավորող սկզբունքներ և կանոններ

Չնայած այն հանգամանքին, որ Մենարինի Գրուպը մշակել է մի շարք սկզբունքներ և կանոններ, չեն բացառվում իրավիճակները, երբ միշտ չէ, որ ակնհայտ է, թե ինչպես է պետք ճիշտ գործել: Նման դեպքերում խնդրում ենք առաջնորդվել Կանոնագրքով և դրանում սահմանված սկզբունքներով: Ոչ մի դեպքում այն համոզմունքը, որ գործողությունները կատարվում են ընկերության լավագույն շահերից ելնելով, չի կարող արդարացնել սույն Կանոնագրքին հակասող գործողությունները:



Սույն Կանոնագիրքը սահմանում է դրական սկզբունքները և վարքագծի կանոնները՝ որպես աշխատակիցների, հիվանդների, բիզնես գործընկերների և ընդհանրապես հասարակության հանդեպ մեր նվիրվածության կոնկրետ ապացույց:

Ղեկավարության նվիրվածություն և պատասխանատվություն

Ղեկավարությունն անմիջականորեն պատասխանատու է Կանոնագրքի կիրարկման համար և ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Մենարինի Գրուպ ընկերությունների կողմից այն պահպանելու համար:

Կազմակերպության բոլոր մակարդակների վրա ղեկավարությունն անմիջականորեն պատասխանատու է էթիկական խնդիրների բացահայտման համար և իր պահանջների, գործողությունների և վարքագծի միջոցով ցույց է տալիս սույն Կանոնագրքով սահմանված էթիկական սկզբունքների և կանոնների կարևորությունը:

Ղեկավարության նվիրվածություն և պատասխանատվություն

Մենարինիի բոլոր ղեկավարները պետք է պատրաստ լինեն որոշումներ կայացնել խմբի հիմնական արժեքներին համապատասխան, պատասխանատվություն ստանձնել իրենց գործողությունների համար և հաշվետու լինել դրանց համար: Օրինակ ծառայելով՝ նրանք ոչ միայն կապահովեն գիտելիքներ, հասկացողություն և բոլոր աշխատակիցների կողմից սկզբունքների ու կանոնների պահպանումը, այլ նաև անհրաժեշտության դեպքում կամ եթե անհրաժեշտ համարվի, կտան ուղղորդում, աջակցություն և պարզաբանումներ:
Ղեկավարները պետք է հստակ հայտարարեն, որ չեն հանդուրժի Վարքագծի Կանոնագրքի խախտում.

Պատասխանատվություն և օրենքների և կանոնների պահպանում

Մենարինին առաջնորդվում է այն երկրների բոլոր գործող օրենքներով և նորմատիվ ակտերով, որտեղ նա գործում է, ներառյալ օրենքներն ու նորմատիվ ակտերը, որոնք կարգավորում են մեր բոլոր ապրանքների հետազոտությունը, մշակումը, արտադրությունը, բաշխումը, շուկայավարումը և առաջմղումը: Սա վերաբերում է նաև տեղական առևտրային միությունների կանոններին: Սույն Կանոնագրքի և գործող միջազգային և տեղական օրենքների միջև հակասության և/կամ անհամապատասխանության դեպքում կիրառվում է ամենախիստ կանոնը:

02

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կաշառքի անթույլատրելիություն

Փոխգործակցություն բուժաշխատողների հետ (HCPs)

Առաջմղման (խթանման) գործունեություն և գիտական վոխանակում

Նվերներ, հյուրընկալություն և հարակից ծախսեր

Շահերի բախում

Մատակարարների ընտրություն և գնումներ

Մրցակցություն և բարեխղճություն

Միջազգային առևտուր

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Կաշառքի անթույլատրելիություն

Մենարինին խստիվ արգելում է կաշառակերության ցանկացած ձև (լինի հանրային, մասնավոր, ակտիվ թե պասիվ), վատնում, խարդախություն, գողություն և/կամ անհարկի օգուտների ներկայացում:
Այսպիսով, Մասնակիցները պետք է ձեռնպահ մնան ուղղակի կամ անուղղակի առաջարկներից, խոստումներից կամ որևէ արժեքավոր իրերի տրամադրումից (օրինակ՝ նվերներ, ճամփորդության հետ կապված անհիմն օգուտներ, գործնական պայմանավորվածություններ և այլն), որոնք կարող են ազդել գործնական որոշման կայացման կամ անարդար օգուտներ ստանալու, ներառյալ գործող պայմանագրերի կամ նոր բիզնեսի ստեղծման վրա:

Շարունակությունը հաջորդ էջում →

Երբ բախվում եք բարդ իրավիճակի, հարցրեք ինքներդ ձեզ.

Արդյո՞ք թույլատրվում է կիրառելի օրենքներով և կանոններով:

Արդյո՞ք դա համահունչ է Կանոնագրքի տառին և ոգուն, ինչպես նաև ընկերության այլ քաղաքականություններին ու ընթացակարգերին:

Արդյո՞ք ինձ հարմար կլինի, եթե իմ գործողությունները հայտնի դառնան լրատվամիջոցներին:

Մենարինին խստիվ արգելում է կաշառքի ցանկացած ձև: Բոլոր մասնակիցները պետք է հավատարիմ մնան այս սկզբունքին և կտրականապես հրաժարվեն ցանկացած իրավիճակից, որը կարող է անպատշաճ կերպով ազդել բիզնեսի որոշման կամ անարդար գործնական առավելություն ստանալու վրա:

Կաշառքի անթույլատրելիություն

Նման գործողություններն անընդունելի են համարվում Մենարինիի, նրա աշխատակիցների և բիզնես գործընկերների համար:

Ներգրավված անձինք (ընկերության հետ միասին) պատասխանատվություն են կրում սույն Կանոնագրքի համաձայն, այն երկրների օրենքներին և նորմատիվ ակտերին համապատասխան, որտեղ նրանք գործում են, ներառյալ երրորդ կողմի հետ փոխգործակցության դեպքում, որն առաջարկում կամ տալիս է կաշառք: Որպեսզի Մենարինին հարաբերություններ պահպանի միայն նրանց հետ, ովքեր հավատարիմ են մեր էթիկական չափանիշներին, անհրաժեշտ է ցուցաբերել զգուշություն և պատշաճ զգոնություն երրորդ կողմերի ընտրության հարցում: Սա վերաբերում է նաև բուժաշխատողների հետ գործունեությանը: Կարևոր է հիշել, որ շատ իրավիճակներում նրանք կարող են լինել պաշտոնյաներ/պետական պաշտոնյաներ՝ կաշառակերության և կոռուպցիայի մասին օրենքների կիրառման առումով (տես Առողջապահության ոլորտի աշխատողների հետ փոխգործակցություն):

Փոխգործակցություն բուժաշխատողների հետ (HCPs)

Մերանինին լիովին առաջնորդվում է բուժաշխատողների հետ փոխգործակցությանը վերաբերող բոլոր գործող կանոնակարգերով: Առողջապահության ոլորտի աշխատողների բժշկական կարծիքի վրա ազդեցությունը բացառելու նպատակով, կառավարության, հիմնարկների և այլ կառույցների (պետական և մասնավոր) աշխատակիցների կամ պաշտոնյաների հետ բոլոր հարաբերությունները պատշաճ վերահսկվում են (տես «Կաշառքի անթույլատրելիություն» բաժինը): Եթե Ձեզ համար՝ որպես հետազոտող, խորհրդատու կամ զեկուցող, անհրաժեշտ լինի ներգրավել առողջապահության աշխատող՝ մեր հետազոտությունն իրականացնելու կամ գիտական գիտելիքները կիսելու համար, ապա դա կարվի բացառապես օրինական և հիմնավորված գործնական նպատակներ ապահովելու նպատակով: Նման համագործակցության պայմանները նույնպես պետք է համապատասխանեն ներքին սկզբունքներին ու ընթացակարգերին, ինչպես նաև բոլոր օրենքներին ու կանոնակարգերին: Առողջապահության ոլորտի աշխատողների հետ փոխգործակցությունը պետք է կարգավորվի ինչպես միջազգային իրավունքով, այնպես էլ ոլորտի համապատասխան վարքագծի կանոնագրքերով (մասնավորապես, Դեղարտադրողների և ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - IFPMA) և տարածաշրջանային/տեղական կանոնակարգերով (օրինակ՝ Դեղագործական արդյունաբերության և ասոցիացիաների եվրոպական ֆեդերացիա - EFPIA):

Այդ նպատակով Մենարինին մշակել է հատուկ ներքին կանոններ առողջապահական համակարգի, դեղագործական շուկայի և գովազդային (խթանման) գործունեության հետ փոխգործակցության համար՝ համաձայն Էթիկայի և Ազնվության մասնագիտական քաղաքականության (Ethics & Integrity Policies), ինչպես նաև Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի և յուրաքանչյուր առանձին ընկերության մակարդակով հակամենաշնորհային օրենսդրության պահպանման համապատասխան ծրագրերի:

Առողջապահության աշխատողներն են. բժիշկներ, ստոմատաբուժության, դեղագործության ոլորտի մասնագետներ, բուժքույրական անձնակազմ և ցանկացած այլ անձինք, ովքեր իրենց գործունեության ընթացքում կարող են նշանակել, ձեռք բերել, մատակարարել, առաջարկել, տրամադրել դեղորայքներ:

Առաջնման (խթանման) գործունեություն և գիտական փոխանակում

Հոգալով արտադրանքի որակի և անվտանգության մասին՝ Մերանինին ձգտում է իր գովազդային (խթանման) և տեղեկատվական գործունեությունն իրականացնել ազնիվ և արդար եղանակով՝ ձգտելով ապահովել և ամրապնդել իր՝ որպես վստահելի ընկերության իմիջը: Խթանման (առաջնման) գործունեության նպատակն է հնարավորություն տալ առողջապահության ոլորտի աշխատողներին ձևավորել իրենց կարծիքը մեր արտադրանքի թերապևտիկ արժեքի վերաբերյալ, ապահովել դրանց արդյունավետ օգտագործումը և բարելավել հիվանդների խնամքը: Սա կարող է ներառել բժշկական հետազոտությունների ընդլայնում, բժշկության և կառավարման ոլորտում գիտելիքների բարձրացում, մեր արտադրանքի և ծառայությունների առաջխաղացում և այնուհետև անհրաժեշտ արձագանքների հավաքում: Գովազդային նյութերն ու գործունեությունը, ներառյալ ընկերության կամ նրա աշխատակիցների կողմից ակտիվորեն օգտագործվողները, որոնք պարունակում են որոշակի հայտարարություններ և տեղեկատվություն մեր արտադրանքի մասին, խստորեն կարգավորվում են համաշխարհային մակարդակով: Մենք պարտավոր ենք պահպանել բոլոր գործող միջազգային և տեղական կանոնակարգերը: Բոլոր գովազդային նյութերն ու գործողությունները պետք է լինեն չափազանց ճշգրիտ՝ երկիմաստությունից խուսափելու և էթիկական, բժշկական և գիտական բարձր չափանիշներին համապատասխան:

Նվերներ, հյուրասիրության նշաններ և հարակից ծախսեր

Սկզբունքորեն, եթե արգելված չէ գործող օրենքներով, նորմատիվ ակտերով կամ ոլորտի համապատասխան կանոնագրքերի դրույթներով, ապա ավանդական նվերների կամ համեստ հյուրասիրությունների կամ այլ բարիքների առաջարկը բիզնես քննարկման ժամանակ թույլատրվում է : Բացառությամբ այն դեպքերի, երբ նման քաղաքավարության նշանները կարող են գնահատվել որպես ստացողին կաշառելու փորձ (տես «Կաշառքի անթույլատրելիություն» բաժինը): Բացի այդ, Դուք պետք է առաջնորդվեք գործարար էթիկայի կանոններով և չափանիշներով, որոնք թույլատրված են տեղական օրենքներով և կանոնակարգերով (տես Փոխգործակցություն առողջապահության աշխատողների հետ):

Շահերի բախում

Շահերի բախումը մի իրավիճակ է, որն առաջանում է, երբ Ձեր անձնական շահերը հակասության մեջ են մտնում կամ կոնֆլիկտի տպավորություն են ստեղծում՝ ներառյալ հավանական, Մենարինիի շահերի հետ:
Այս գործողություններից որևէ մեկի (իրական կամ պոտենցիալ շահերի բախումով) իրականացումը, դրանց իրականացմանն աջակցելը կամ որևէ այլ գործողություն, որը կարող է վնաս հասցնել Ձեր մասնագիտական գնահատականին և/կամ վտանգել ընկերության լավագույն շահերից ելնելով անաչառ որոշում կայացնելու Ձեր կարողությանը, բացարձակապես արգելված են: Սա վերաբերում է նաև հարակից այլ գործունեությանը, որը հակասում են սույն Կանոնագրքի սկզբունքներին և կանոններին: Շահերի բախման վերաբերյալ միայն մեկ կասկած առաջանալու դեպքում Մենարինիի հանդեպ վստահությունը կարող է խաթարվել, ինչը լրջորեն կվնասի մեր հեղինակությանը: Ուստի մենք միշտ ձգտում ենք բացահայտել նման իրավիճակը և միջոցներ ձեռնարկել շահերի բախումը վերացնելու կամ լուծելու համար:

A Շահերի բախման օրինակ. աշխատանք երկու վայրերում

Սցենար
Կադրերի բաժինը տեղեկատվություն է ստանում մեկ այլ ընկերությունում լրիվ դրույքով աշխատող աշխատակցի մասին: Այս կապակցությամբ հարուցվել է դատական գործ:

Արդյունք
Կադրերի բաժնի և աշխատակցի միջև զրույցի ընթացքում պարզվեց, որ նա՝ մինչև Մերանինիում աշխատելը դուրս չի եկել իր նախկին աշխատանքից: Քանի որ երկակի աշխատանքը համարվում է շահերի բախում, որը զգալի վտանգ է ներկայացնում երկու ընկերությունների գաղտնիության համար, Մենարինի հետ աշխատանքային պայմանագիրն անմիջապես խզվեց:

Եզրակացություններ
Պետք է հասկանալ, որ երկակի աշխատանքը կտրականապես չի խրախուսվում, քանի որ դա ակնհայտորեն հակասում է ընկերության պաշտոնական պարտականություններին և գործնական շահերին:

Մատակարարների ընտրություն և գնումներ

Մենարինին իր գործունեությունն իրականացնելիս ձեռք է բերում ապրանքներ և ծառայություններ՝ հաշվի առնելով դրանց որակը, անվտանգությունը, արդյունավետությունը, ինչպես նաև վստահելի մատակարարների առաջարկած գինը:

Մատակարարները պետք է կիսեն բարեխիղճ լինելու և տեղական կանոնները ու օրենքները պահպանելու մեր ձգտումը: Նրանց ընտրությունը հիմված է արդարության, թափանցիկության, շահերի բախումներից ամբողջությամբ խուսափելու, նույնիսկ պոտենցիալ, սկզբունքների վրա, որոնք ազդեցություն ունեն ապրանքները և ծառայությունները ձեռքբերելու մեր ընտրության վրա: Որպես հետևանք, մենք ստուգում ենք մեր մատակարարների հետ փոխգործակցության կանոնավորությունը (տես «Մենարինիի վարքագծի կանոնագիրքը երրորդ անձանց համար»):

Մենք չենք հանդուրժի որևէ անօրինական վարքագիծ, ինչպիսիք են կոռուպցիան, անբարեխիղճ մրցակցությունը, բնապահպանական կանոնների խախտումը կամ աշխատանքային պայմանները, որոնք խախտում են մարդու իրավունքները:

02 - ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մրցակցություն և բարեխղճություն

Մենարինիի համար մրցակցությունը և բարեխղճությունը ոչ միայն իրավական պահանջներ են, այլև հաստատված կորպորատիվ արժեքներ:
Մենք ձգտում ենք ստեղծել բաց և մրցունակ շուկա՝ հիմվելով մեր արտադրանքի ուժեղ կողմերի և առավելությունների վրա: Որպես իր սեփական սոցիալական պատասխանատվության մաս՝ Մերանինի Գրուպն իրականացրել է կոնկրետ քաղաքականություն և ծրագրեր՝ ապահովելու հավասար մրցակցություն և ազնվություն բոլոր գործնական հարաբերություններում: 2006 թվականից ներդրվել է ուսուցման և վերահսկման համալիր համակարգ: Իրականացվել են կորպորատիվ քաղաքականություններ, որոնք մշտապես թարմացվում են՝ գործունեություն ծավալելու ընթացքում հակամենաշնորհային խախտումների ռիսկը նվազեցնելու համար:

Միջազգային առևտուր

Մենարինին պարտավորվում է պահպանել միջազգային առևտրի բոլոր օրենքներն ու կանոնակարգերը, ներառյալ ներմուծումը, արտահանումը, առևտրային պատժամիջոցները և էմբարգոն կարգավորող օրենքները:
Բոլոր աշխատակիցներից պահանջվում է տեղյակ լինել այն սահմանափակումների մասին, որոնք վերաբերում են Մենարինիի ցանկացած գործունեությանը:
Սահմանափակումները և արգելքները կարող են կախված լինել ապրանքների բնույթից, ծագման կամ նշանակման երկրից, ֆինանսական գործարքների արժույթից կամ նույնիսկ նման գործարքի մի մասի սահմանումից:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Մենարինին գիտակցում է շրջակա միջավայրի պաշտպանության կարևորությունը և իր գործունեությունը պլանավորելիս փորձում է հավասարակշռություն գտնել տնտեսական նախաձեռնությունների և շրջակա միջավայրի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումների միջև:
Մենք վարում եք բիզնես ռացիոնալ կերպով՝ էկոլոգիայի տեսանկյունից ելնելով, որպեսզի նվազագույնի հասցնեք շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Սա արտացոլված է մեր պարտավորվածության մեջ, որ որտեղ մենք գործում ենք, մենք կիրառում ենք բնապահպանական չափանիշներ՝ ապահովելու, որ բոլոր կիրառելի միջազգային և տեղական օրենքներն ու կանոնակարգերը պահպանվեն՝ միաժամանակ երաշխավորելով մեր ազդեցությունը մեղմելուն ուղղված գործողությունների առավելագույն արդյունավետությունը:

Գլուխ 2 - Գործնական օրինակներ ✓

Կարո՞ղ եմ ընդունել միջոցառմանը մասնակցելու մատակարարի հրավերը:
Եթե դա արգելված չէ տեղական գործող օրենքներով և արդյունաբերության օրենսգրքերով, ապա հրավերի ընդունումը արգելված չէ, եթե առիթը տեղին է, և միջոցառումը անցկացվում է ոչ կանոնավոր կերպով: Նախքան մասնակցությունը հաստատելը, Դուք պետք է խորհրդակցեք Ձեր ղեկավարի հետ, քանի որ դա կարող է ազդել ապագա որոշումների կայացման Ձեր օբյեկտիվության վրա:

Ի՞նչ պետք է անեմ, եթե անհրաժեշտ լինի որոշում կայացնել, որը կարող է հանգեցնել շահերի բախման:
Անմիջապես քննարկեք իրավիճակը Ձեր ղեկավարի հետ: Սովորաբար բավական է տեղեկացնել և փաստագրել հնարավոր բախումը: Դուք կարող եք նաև քննարկել այս հարցը Իրավաբանական կամ Համապատասխանության բաժնի հետ՝ համապատասխան լուծում գտնելու համար:
Որպես առողջապահության ներկայացուցիչ՝ ես կցանկանայի տեղացի բուժաշխատողներին տրամադրել պլանշետներ, որտեղ ներկայացված են մեր արտադրանքը: Դա հնարավոր է?
Ոչ: Թույլատրվում են միայն ուսումնական նյութեր և անվանական արժեք ունեցող իրեր, որոնք վերաբերում են բժշկական պրակտիկային և թույլատրված են տեղական օրենքներով և ընկերության քաղաքականությամբ: Բոլոր նվերները պետք է նախապես հաստատված լինեն համապատասխան բաժինների կողմից: Թույլատրված նվերների վերաբերյալ որևէ կասկած ունենալու դեպքում, խնդրում ենք կապվել մեր Համապատասխանության բաժնի հետ՝ պարզաբանումներ կամ խորհրդատվություն ստանալու համար:

03

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ռեսուրսներ Ոտնձգությունների և խտրականության բացարձակ չընդունում

Արդար վերաբերմունք

Առողջություն և անվտանգություն

Մարդու իրավունքներ

Աշխատակիցների գաղտնիության իրավունք

Ներգրավման մշակույթ

Պատասխանատու հաղորդակցություն սոցիալական ցանցերում

Մարդկային ռեսուրսներ

Մարդկային ռեսուրսները մեր ընկերության զարգացման կարևորագույն տարրն են: Մարդկային ռեսուրսների կառավարումը հիմված է մարդկանց նկատմամբ հարգանքի և նրանց եզակիության ճանաչման վրա:
Նրանց բարձր պրոֆեսիոնալիզմը և Մերանինիին նվիրվածությունը չափազանց կարևոր են ընկերության նպատակներին հասնելու համար: Այդ իսկ պատճառով, մենք խրախուսում ենք մասնագիտական աճն ու զարգացումը, որոնք ուղղված են գիտելիքների և ձեռք բերված հմտությունների բարձրացմանը՝ անձնական իրավունքների, մասնավորապես մեր աշխատակիցների ֆիզիկական և էթիկական անձեռնմխելիության վերաբերյալ գործող օրենսդրության համաձայն:
Կանոնագրքում նշված արժեքներին նվիրվածությունը հիմնարար նշանակություն ունի մեր աշխատակիցներին պարգևատրելու, ոգևորելու և կարիերայի առաջխաղացման համար:
Մենարինին հավասարապես և հարգանքով է վերաբերվում թափուր աշխատատեղերի բոլոր դիմորդների նկատմամբ՝ օգտագործելով ստանդարտ առաջատար փորձը: Ցանկացած ձևի առաջարկություն և հովանավորչություն չի թույլատրվում:

Ոտնձգությունների և խտրականության բացարձակ չընդունում

Ինչ վերաբերում է խտրականությանը կամ ոտնձգություններին, մենք մեր աշխատակիցներից պահանջում ենք հավատարիմ մնալ բացարձակ հանդուրժողականության մեր դիրքորոշմանը: Մերանինին պարտավորվում է ստեղծել խտրականությունից զերծ աշխատանքային միջավայր: Մենք չենք հանդուրժի որևէ նախապաշարմունք, որը հիմված է անձնական հատկանիշների վրա, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, կրոնը, ազգությունը, սեռական նախապատվությունը, տարիքը, հաշմանդամությունը, հղիությունը, ամուսնական կարգավիճակը, վետերանի կարգավիճակը կամ օրենքով պահանջվող ցանկացած այլ հանգամանք:

Մարդկային ռեսուրսների կառավարումը, ներառյալ հավաքագրումը (ռեկրուտինգ), ատեստավորումը, տեղափոխումը, կարիերայի առաջխաղացումը, փոխհատուցումը կամ աշխատանքից ազատելը, պետք է իրականացվի առանց խտրականության: Աշխատակիցները և ղեկավարները պետք է ակնկալեն, որ իրենք կգնահատվեն ըստ իրենց հմտությունների, կարողությունների և արտադրողականության, այլ ոչ թե իրենց անհատական հատկանիշների կամ հակումների:

Մենարինին ձգտում է ստեղծել աշխատանքային միջավայր առանց խտրականության: Մենք չենք հանդուրժի որևէ կողմնակալություն՝ հիմված անձնական հատկանիշների վրա, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, կրոնը, ազգությունը, սեռական նախապատվությունը, տարիքը, հաշմանդամությունը, հղիությունը, ամուսնական կարգավիճակը, վետերանի կարգավիճակը և այլն: Նույնը վերաբերում է հետապնդմանը, ահաբեկմանը կամ հարկադրանքին:

Արդար վերաբերմունք

Մենարինին երաշխավորում է արդար և հավասար վերաբերմունք բոլոր աշխատակիցների նկատմամբ, նպաստում է բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծմանը և պահպանում է աշխատանքային բոլոր օրենքներն ու կանոնակարգերը: Մենք անում ենք ամեն հնարավոր բան, որպեսզի ապահովենք ոչ քաղաքակիրթ և անմարդկային գործողություններից զերծ աշխատանքային միջավայր, ներառյալ սեռական ոտնձգությունները և անարգանքը, մարմնական պատիժը, ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրումները և բանավոր վիրավորանքները:

Առողջություն և անվտանգություն

Մենարինին գիտակցում է իր բոլոր աշխատակիցների և այն մարդկանց առողջության և անվտանգության պաշտպանության կարևորությունը, ովքեր մուտք ունեն մեր գրասենյակներ և ներգրավված են ընկերության գործունեության մեջ: Մենք պարտավորվում ենք ամբողջ աշխարհի աշխատավայրերում կիրառել առողջության և անվտանգության միասնական չափանիշներ՝ բարելավելով աշխատանքային միջավայր, ապահովելով բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին համապատասխանությունը, ներառյալ գործնական ճանապարհորդությունների և հանդիպումների հետ կապված: Մեր նպատակն է նվազեցնել կամ կանխել մեր աշխատակիցների, երրորդ անձանց և հանրության մասնակցությամբ կողմնակի դժբախտ պատահարները: Որպես այդպիսին, մենք ակտիվորեն խթանում ենք դժբախտ պատահարների կանխարգելման և ռիսկերի իրազեկման մշակույթը մեր աշխատակիցների շրջանում՝ հատուկ տեղեկատվության և նպատակային վերապատրաստման ծրագրերի միջոցով: Յուրաքանչյուր ոք պատասխանատու է անվտանգ աշխատանքային պայմանների պահպանման համար, ներառյալ բոլոր դժբախտ պատահարների և/կամ «պոտենցիալ վտանգավոր իրավիճակների» մասին ժամանակին իրազեկման միջոցով:

Մարդու իրավունքներ

Մենարինին պարտավորում է հավատարիմ մնալ և հարգել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրի սկզբունքները՝ խուսափելով որևէ չարաշահման մեջ ներգրավվելուց: Մենք պարտավորվում ենք պաշտպանել մեր աշխատակիցների արժանապատվությունը, ազատությունը, առողջությունը և իրավահավասարությունը՝ համաձայն բոլոր կիրառելի օրենքների, և արգելում ենք խտրականության ցանկացած ձև, մանկական կամ հարկադիր աշխատանքի կիրառումը:
Մենք մեր գործընկերներից պահանջում ենք մարդու և աշխատողների իրավունքների նկատմամբ նույն հավատարմությունը:

Աշխատակիցների գաղտնիության իրավունք

Մենարինին լրջորեն է վերաբերվում բոլոր անձնական տվյալների, ներառյալ իր աշխատակիցների և գործընկերների անձնական տվյալների պաշտպանությանը: Այս տեղեկատվությունը մշակվում է խիստ գաղտնիությամբ՝ համաձայն տվյալների պաշտպանության գործող կանոնակարգերի, ինչպես նաև Մենարինի Գրուպի տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի:
Տեղեկատվությունը հավաքագրվում է տվյալների նվազագույնի հասցնելու սկզբունքին համապատասխան և միայն աշխատանքային հարաբերությունների հետ կապված նպատակներով: Դա արվում է միայն լիազորված աշխատակիցների կողմից՝ աշխատանքային խիստ անհրաժեշտությունից ելնելով: Տվյալները ապահով կերպով պահվում են այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է այն նպատակներին հասնելու համար, որոնց համար դրանք հավաքվել են, որից հետո դրանք պատշաճ կերպով ջնջվում են: Ցանկացած ժամանակ մեր աշխատակիցները և գործընկերները կարող են կապ հաստատել տվյալների պաշտպանության իրավասու անձնակազմի հետ՝ օրենքով նախատեսված գաղտնիության իրավունքներից օգտվելու նպատակով և/կամ հաղորդել անձնական տեղեկատվության չարաշահման մասին:

Ներգրավման մշակույթ

Մեզ համար բազմազանությունը կարևոր արժեք է յուրաքանչյուր աշխատակցի եզակիության և արժեքավոր ավանդի հանդեպ հարգանքի մշակույթի զարգացման համար: Մեր աշխատանքային միջավայրում ցանկացած բազմազանություն՝ լինի դա ազգություն, մշակույթ, էթնիկական պատկանելիություն, կրոն կամ մասնագիտական ծագում, դիտվում է որպես լրացուցիչ առավելություն: Մենք փորձում ենք հաշվի առնել նման տարբերությունները և գիտակցել դրանց կարևորությունը մեր հաջողության համար:

Պատասխանատու հաղորդակցություն սոցիալական ցանցերում

Ընկերության կերպարը և հեղինակությունը պաշտպանելու համար աշխատակիցները պետք է պատշաճ կերպով օգտվեն սոցիալական մեդիայից՝ ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական կյանքում: Իրականում, որոշակի բովանդակություն տեղադրելը կամ մեկնաբանելը կարող է ազդել Մենարինիի հեղինակության վրա:

Միայն լիազորված աշխատակիցներին է թույլատրվում շփվել սոցցանցերում Մենարինիի անունից՝ Ընկերության արտադրանքների հետ կապված:

Գլուխ 3 - Գործնական օրինակներ

Ես տեղյակ եմ, որ իմ բաժնում թափուր աշխատատեղ կա: Ես նաև գիտեմ, որ եղբայրս հետաքրքրված է աշխատել Մենարինիում: Կարո՞ղ եմ նրան երաշխավորել իմ ղեկավարին կամ կադրերի բաժնին:
Մենարինին խրախուսում է որակյալ անձնակազմի երաշխավորությունները՝ անկախ աշխատակիցների հետ նրանց հարաբերություններից: Այնուամենայնիվ, ընկերությունը չի իրականացնում կադրերի հավաքագրում կամ աշխատանքի չի ընդունում որևէ ձևի երաշխավորության կամ հովանավորչության հիման վրա:

Ես ունեմ ոչ պաշտոնական տեղեկություն, որ մեր մատակարարը գտնվում է հետաքննության մեջ՝ մանկական աշխատուժի օգտագործման մեղադրանքով: Արդյո՞ք ես պետք է անտեսեմ այս լուրը (բամբասանք):
Ոչ: Մենարինին պաշտպանում է մարդու իրավունքները և չի հանդուրժում այնպիսի գործողություններ, որոնք հակասում են գործող օրենսդրությանը և ընդունված աշխատանքային չափանիշներին: Դուք պետք է անմիջապես զեկուցեք այդ մասին Ձեր ղեկավարին: Մենարինին կուսումասիրի այդ հարցը և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան քայլեր կձեռնարկի:

Գործընկերներիցս մեկն ինձ առաջարկեց սոցիալական ցանցում իմ պրոֆիլի միջոցով հրապարակել մեր արտադրանքի մասին գրառումը: Դա թույլատրվա՞ծ է:
Այս իրավիճակը մեծ զգուշություն է պահանջում: Հիշեք, որ միայն լիազորված աշխատակիցները իրավունք ունեն պաշտոնապես շփվել սոցցանցերում Մենարինիի անունից, ինչպես նաև իր արտադրանքի մասին անել հրապարակումներ:

04

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ՄԵՐ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՎՐԱ

Բարեխղիղ վերաբերմունք հետազոտության և մշակման նկատմամբ
Տվյալների հրապարակում
Մեր արտադրանքի որակը
Հիվանդի անվտանգություն
Անվտանգության մոնիտորինգ և հաշվետվություն
Տվյալների գաղտնիություն



Բարեխղիղ վերաբերմունք հետազոտությունների և մկակման նկատմամբ

Հետազոտության և մշակման հարցում մենք ձգտում ենք ձեռք բերել գիտական առաջատար փորձ, ինչը թույլ է տալիս մեզ տրամադրել մեր հիվանդների թերապևտիկ պահանջները բավարարող նորարար և որակյալ արտադրանք:

Մենք բարեխղճորեն իրականացնում ենք այս գործունեությունը՝ առանց ճնասելու էթիկական ասպեկտները՝ ապահովելով, որ բոլոր նախակլինիկական և կլինիկական հետազոտություններն իրականացվում են ամենաբարձր բժշկական և գիտական չափանիշներին համապատասխան՝ բոլոր գործող օրենքների, նորմատիվ ակտերի և առաջատար փորձի կիրառման ուղեցույցների համաձայն:

Տվյալների հրապարակում

Այն դեպքերում, որտեղ թույլատրվում է, մենք փորձում ենք կլինիկական փորձարկումներից ստացված տեղեկատվությունն ու տվյալները կիսել հիվանդների, բժշկական կամ հետազոտական միությունների և լրատվամիջոցների հետ:

Մենք դա անում ենք՝ պահպանելով հիվանդների գաղտնիությունը, ինչպես նաև գործող կանոնակարգերին համապատասխան:

Մեր արտադրանքի որակը

Մենք նախագծում, արտադրում և վերահսկում ենք մեր արտադրանքը որակի ամենաբարձր չափանիշներին, բոլոր օրենսդրական և նորմատիվ պահանջներին, ինչպես նաև համաշխարհային պրակտիկայում առաջատար փորձին համապատասխան: Այդ նպատակով մենք ներդրել ենք որակի եզակի համակարգ, որն աջակցում և ապահովում է բարձր որակավորում ունեցող անձնակազմ, որը մշտապես խթանվում է ընկերության կողմից: Որակի համակարգը պարբերաբար ստուգվում և հավաստագրվում է համապատասխան առողջապահական մարմնի կողմից:

Հիվանդի անվտանգություն

Մեր գործունեության հիմքում ընկած է հիվանդների նկատմամբ մեր ուշադրությունը: Մենք իրացնում ենք դեղամիջոցներ, որոնք պաշտպանում և բարելավում են ֆիզիկական ամբողջականությունն ու առողջությունը:
Հիվանդի նկատմամբ էթիկական պարտավորությունների լավագույն իրականացման և համապատասխանության համար մենք գործադրում ենք բոլոր ջանքերը՝ օպտիմալ գիտական, թերապևտիկ, բժշկական և ախտորոշիչ լուծումներ տրամադրելու համար: Դա նաև ենթադրում է մեր արտադրանքի նկատմամբ ամենախիստ նորմերի պահպանմանը և նույնիսկ գերազնահատելուն ուղղված աշխատանք՝ ապահովելու հիվանդների անվտանգությունը:
Մենք հետևողականորեն ձգտում ենք պաշտպանել մեր ապրանքներն ու ապրանքանիշերը կեղծիքից, կեղծումից, գողությունից կամ այլ անօրինական օգտագործումից:



Անվտանգության մոնիտորինգ և հաշվետվություն

Մենարինին վերահսկում, գնահատում և կառավարում է բոլոր տվյալները, որոնք վերաբերում են շուկայահանվող արտադրանքի և կլինիկական փորձարկումների ենթարկվող դեղերի անվտանգությանը: Հետևաբար, աշխատակիցներն անմիջապես հայտնում են կողմնակի ազդեցությունների կամ խնդիրների մասին, որոնք կարող են առաջանալ Մենարինի Գրուպ ընկերության կողմից վաճառվող դեղամիջոցի կամ արտադրանքի ընդունումից հետո: Անցանկալի երևույթները ներառում են ցանկացած անբարենպաստ և անսպասելի հետևանքներ, ինչպիսիք են լաբորատոր արդյունքների շեղումները, ախտանիշը կամ հիվանդությունը, որը ժամանակավորապես կապված է դեղամիջոցի ընդունման հետ, նույնիսկ եթե դա կապված չէ բուն դեղամիջոցի հետ: Անբարենպաստ երևույթների մասին կարող եք տեղեկացնել՝ Մենարինի Գրուպ ընկերությունների կայքերում մանրամասն նկարագրված ընթացակարգի համաձայն:

Տվյալների գաղտնիություն

Մեր հիվանդների անձեռնմխելիության իրավունքը, հիմարար ազատությունները և արժանապատվությունը, ներառյալ՝ նրանց, ովքեր մասնակցում են կլինիկական փորձարկումներին, որոնք հովանավորվում են Մենարինի Գրուպի կողմից աշխարհի ցանկացած վայրում, մեզ համար չափազանց կարևոր են:
Մենարինին պարտավորվում է ապահովել իր բոլոր հիվանդների տվյալների անվտանգությունը, պահպանել անվտանգության միջոցառումները՝ գործող օրենքներին համապատասխան՝ կանխելու տվյալների կորուստը, անօրինական մուտքը և օգտագործումը: Բացի այդ, ընկերությունն կիրառում է տարբեր տեխնոլոգիական լուծումներ և անվտանգության ընթացակարգեր, որոնք նախատեսված են բոլոր անձնական տվյալների պաշտպանության համար: Նման տվյալները հավաքվում, մշակվում և ջնջվում են անվտանգության ամենախիստ չափանիշներին համապատասխան և ուղեկցող տեղեկատվական ծանուցումների համաձայն: Ցանկացած պահի հիվանդները կարող են կապ հաստատել տվյալների պաշտպանության իրավասու աշխատակցի հետ՝ օգտվելու գաղտնիության մասին օրենքով վերապահված իրավունքներից և/կամ հայտնելու իրենց անձնական տվյալների ցանկացած չարաշահման և ոչ պատշաճ օգտագործման մասին:

04 - ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ՄԵՐ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՎՐԱ
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Գլուխ 4 - Գործնական օրինակներ ✓

Ես աշխատում եմ արտադրական գծում: Ի՞նչ պետք է անեմ, եթե նկատեմ, որ կոնվեյերից դուրս եկող որոշ ապրանքներ չեն համապատասխանում Մենարինիի որակի չափանիշներին:
Մենարինին արտադրում է բարձրորակ արտադրանք: Եթե նկատեք մեր չափանիշներին չհամապատասխանող ապրանքներ, ապա առաջնորդվեք համապատասխան փաստաթղթերում նկարագրված ընթացակարգով: Անհրաժեշտության դեպքում տեղեկացրեք Ձեր ղեկավարին և որակի վերահսկման բաժնի մասնագետներին:

Երեկույթի ժամանակ իմ գործընկերը իմանում է, որ իր ընկերը ընդունել է Մենարինիի ապրանք և գլխացավ ունի: Արդյո՞ք ես պետք է այդ մասին զեկուցեմ:
Այո՛: Անկախ նրանից, թե ինչպիսի եղանակով է հավաքվում տեղեկատվությունը և Մենարինիի արտադրանքի պոտենցիալ կողմնակի ազդեցության ծանրությունը, անհրաժեշտ է զեկուցել դրա մասին 24 ժամվա ընթացքում:

Ես համագործակցում եմ մի խումբ հիվանդների հետ որոշակի նախագծերում և երբեմն նրանց անձնական տվյալները փոխանցվում են ինձ: Ինչպե՞ս ես պետք է վարվեմ:
Ձեր պարտականությունն է ապահովել, որ կոնկրետ նախագծի հետ կապված անձնական տվյալները պատշաճ կերպով պաշտպանված լինեն:

05

Բարեխղճ վերաբերմունք տեղեկատվության մշակման և ակտիվների պաշտպանության նկատմամբ

Հաշվապահական հաշվառման մատյաններ, գրառումներ և ֆինանսական հաշվետվություն

Մտավոր սեփականություն

Գաղտնի տեղեկատվություն

Կորպորատիվ ակտիվների պաշտպանություն

Հաշվապահական հաշվառման մատյաններ, գրառումներ և ֆինանսական հաշվետվություն

Մեր հաշիվների, ֆինանսական հաշվետվությունների, հաշվետվությունների և այլ տվյալների ճշմարտացիությունը, բարեխիղճությունը և թափանցիկությունը՝ բաժնետերերին կամ հանրությանն ուղղված օրենքի համաձայն, հիմնարար արժեք են ներկայացնում Մենարինի Գրուպի համար: Բոլոր տնտեսական և ֆինանսական գործարքները պատշաճ կերպով գրանցվում են:

Յուրաքանչյուր գրառում պետք է ուղեկցվի գործարքը հաստատող համապատասխան փաստաթղթերով, ով է դրա թույլտվությունը տվել, ով է կատարել այն, գրանցել և ստուգել:

Մտավոր սեփականություն

Մենարինին խթանում է դեղագործական և ախտորոշիչ նորարարությունները՝ առաջադեմ արտադրանքի հետազոտության և մշակման միջոցով, իսկ մտավոր սեփականության պաշտպանությունը առանցքային դեր ունի այս նպատակին հասնելու համար: Մտավոր սեփականությունն ընկերությանը տալիս է ինտելեկտուալ առավելություն:

Շարունակությունը հաջորդ էջում

> Մենք խթանում ենք դեղագործական և ախտորոշիչ նորարարությունները՝ առաջադեմ արտադրանքի հետազոտության և մշակման միջոցով, իսկ մտավոր սեփականության պաշտպանությունը առանցքային դեր ունի այս նպատակին հասնելու համար:

Մտավոր Սեփականություն

Սա վերաբերում է ցանկացած արտոնագրին, ապրանքային նշաններին, հեղինակային իրավունքին, առևտրային գաղտնիքին (օրինակ՝ գիտական, տեխնիկական և առևտրային նոու-հաու), ինչպես նաև բիզնես ռազմավարություններին, ներառյալ արտադրանքը շուկա հանելուն: Մենք ապահովագրում ենք մեր մտավոր սեփականությունը կորստից, գողությունից և այլ անօրինական օգտագործումից և հարգում ենք երրորդ անձանց մտավոր սեփականությունը:

Գաղտնի տեղեկատվություն

Մեր գործունեության ընթացքում մենք կարող ենք ստեղծել կամ ձեռք բերել գաղտնի տեղեկատվություն մեր ընկերությունների, բիզնես գործընկերների և երրորդ կողմերի մասին: Ընկերության շահերը պաշտպանելու համար մենք չենք տրամադրում այս տեղեկատվությունը որևէ մեկին՝ թե Մենարինիի ներսում, թե դրա տարածքից դուրս առանց օրինական գործնական անհրաժեշտության կամ նախնական գաղտնիության համաձայնագրի:

Կորպորատիվ ակտիվների պաշտպանություն

Մենարինին ակնկալում է, որ մեզանից յուրաքանչյուրը կպաշտպանի ընկերության ակտիվները և կապահովի դրանց արդյունավետ օգտագործումը: Ակտիվները ներառում են ինչպես նյութական առարկաներ, այնպես էլ մեր գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, ինչպիսիք են մտավոր սեփականությունը, աշխատանքային փաստաթղթերը և էլեկտրոնային տվյալները:
Այս ամենը պետք է օգտագործվի օրինական գործնական նպատակներով և շահերի բախումից խուսափելու համար: Գողությունը, անփութությունը և վատնումն ուղղակիորեն ազդում են արդյունավետության վրա և կարող են խաթարել երրորդ կողմերի վստահությունը մեր նկատմամբ:

Գլուխ 5 - Գործնական օրինակներ ✓

Իմ անմիջական ղեկավարը խնդրեց ինձ գրանցել վաճառքները, որոնք նա ակնկալում է մեկ հաճախորդի նկատմամբ, սակայն որոնք դեռ հաստատված չեն: Սա լավ է?
Ոչ: Գրառումների և հաշիվների կեղծումը, փաստերի խեղաթյուրումը համարվում են խարդախություն: Բացի կարգապահական տույժերից, այն կարող է հանգեցնել Ձեր, ինչպես նաև Մենարինիի նկատմամբ քաղաքացիական կամ քրեական պատասխանատվության: Երբեք մի կատարեք կեղծ կամ ապակողմնորոշիչ գրառումներ Մենարինիի փաստաթղթերում:

Ես կազմակերպում եմ սեմինար Մենարինիի համար և ցանկանում եմ պատճենել հողված գիտական ամսագրից՝ մասնակիցներին բաժանելու համար: Ես կարող եմ դա անել?
Դուք պետք է հաշվի առնեք երրորդ անձանց հեղինակային իրավունքները՝ համաձայն գործող օրենսդրությանը և օրենքների: Հեղինակային իրավունքի վերաբերյալ կասկած ունենալ դեպքում, դիմեք Ձեր ղեկավարին և/կամ իրավաբանական բաժին:
Ես ճանապարհորդում եմ գործընկերոջս հետ, և մենք քննարկում ենք շարունակական կլինիկական փորձարկման գաղտնի արդյունքները: Դա ընդունելի՞ է:
Դուք պետք է չափազանց զգույշ լինեք հասարակական վայրերում, սոցիալական ցանցերում և չհաստատված կապի ուղիներ օգտագործելիս զգայուն տվյալների հետ աշխատելիս:

06

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ

Քաղաքական ներդրումներ

Բարեգործական և սոցիալական ծրագրեր

Համագործակցություն իշխանությունների և հաստատությունների հետ

Քաղաքական ներդրումներ

Մենարինին խստորեն ձեռնպահ է մնում քաղաքական կուսակցություններին, քաղաքական կամ արհմիութենական շարժումներին, քաղաքական կոմիտեներին և կազմակերպություններին, ինչպես նաև նրանց ներկայացուցիչներին և թեկնածուներին ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորելուց: Ընկերությունը նաև չի ֆինանսավորում միություններին և չի հովանավորում միջոցառումներ կամ համաժողովներ, որոնց նպատակը քաղաքական քարոզչությունն է:



Բարեգործություն և սոցիալական ծրագրեր

Մենարինին երաշխավորում է, որ բարեգործական կազմակերպություններում ցանկացած ներդրում կամ նվիրատվություն կատարվում է բոլոր գործող միջազգային և տեղական օրենքներին և հրամանագրերին համապատասխան: Բարեգործական նվիրատվությունները և սոցիալական ծրագրերը պետք է լինեն լիովին թափանցիկ, և ոչ մի դեպքում չպետք է օգտագործվեն կոռուպցիոն նպատակներով: Նվիրատվությունները և սոցիալական ծրագրերը չեն կարող ուղղված լինել անհարկի օգուտներ ստանալուն, ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանցից, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են ստացողների հետ:



Մենք ձգտում ենք հաստատել ազնիվ և բարեկիրթ հարաբերություններ բոլոր իրավասու մարմինների և հաստատությունների հետ:

Համագործակցություն իշխանությունների և հաստատությունների հետ

Մենարինին ձգտում է հաստատել ազնիվ և բարեկիրթ հարաբերություններ իրավասու մարմինների և հաստատությունների հետ:

Մենք միշտ պատրաստ ենք աջակցություն ցուցաբերել տեղեկատվության կամ տեղում հետաքննության վերաբերյալ իրավական հարցումների հետ կապված: Արգելվում է ցանկացած վարքագիծ, որն ուղղված է օրենսդրությամբ սահմանված կարգով հետաքննությանը խոչընդոտելուն կամ տեղեկատվության հարցումը ստանալուն:

Գլուխ 6 - Գործնական օրինակներ

Մեր դիստրիբյուտորն ասաց, որ կարող է նոր պայմանագիր կնքել կառավարության հետ, եթե մենք կատարենք որոշակի բարեգործական ներդրում: Լսել եմ, որ այս բարեգործական կազմակերպության խորհրդի անդամն աշխատում է պետական գործակալությունում, որը պատասխանատու է այս պայմանագրի համար: Ինչ ես պետք է ձեռնարկեմ?
Ոչ մի ներդրում մի կատարեք և այդ մասին զեկուցեք Ձեր ղեկավարին: Դիստրիբյուտորն առաջարկում է կաշառքը քողարկել որպես բարեգործական նվիրատվություն, կամ նույնիսկ հավանաբար (պոտենցիալ) օգտագործել ներդրման մի մասը՝ պայմանագրի համար պատասխանատու պաշտոնյաներին կաշառելու համար:

Իշխանությունները տեղեկատվություն ստանալու պաշտոնական հարցում են ուղարկել ընկերությանը: Արդյո՞ք ես պետք է տրամադրեմ ընկերության փաստաթղթերը:
Այո՛: Մենարինիի համապատասխան ստորաբաժանումները լիովին համագործակցում են իշխանությունների հետ և պաշտոնական հարցումների դեպքում տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն: Անմիջապես ուղարկեք հարցումները համապատասխան բաժիններին (օրինակ՝ Կորպորատիվ Հակամենաշնորհային Օրենսդրության և Գաղնիտության Պահպանման Բաժին, Ներքին Աուդիտի և Համապատասխանության Բաժին, Կադրերի Բաժին):

07

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

Իրազեկում

Կարգապահական տույժ

Պաշտպանություն վրեժից



Իրազեկում

Անհրաժեշտության դեպքում, Մասնակիցներից պահանջվում է զեկուցել օրենքների, կանոնակարգերի, սույն Կանոնագրքի սկզբունքների, Մենարինիի քաղաքականության և ընթացակարգերի ցանկացած խախտման մասին, ներառյալ հնարավոր խախտումները: Աշխատակիցները, որոնք տեղյակ են վերոնշյալ խնդիրներից որևէ մեկի մասին, որը կարող է ազդել Մենարինիի պարտավորությունների վրա, պետք է անհապաղ տեղեկացնեն այս մասին.

- իրենց անմիջական ղեկավարին,
- կադրերի բաժին,
- և (կամ) համապատասխանության բաժին:

Հնարավոր է հայտարարությունն անել գաղտնի և անանուն՝ առանց հետապնդման վախի:

Շարունակությունը հաջորդ էջում →

Կան խախտումների արդյունավետ հաղորդման հատուկ ուղիներ: Դիմումը կարելի է ներկայացնել անանուն՝ առանց հետապնդման վախի: Բոլոր հաղորդագրությունները կդիտարկվեն գաղտնի:

Իրազեկում

Խախտումների մասին արդյունավետ իրազեկման համար կարող եք օգտագործել կապի հետևյալ ուղիները.

Կայք
Համապատասխանության կենտրոնական վարչության էլեկտրոնային հասցեն է՝
globalcompliance@menarini.com:**globalcompliance@menarini.com**.
Բոլոր հաղորդակցությունները անաչառ և պատշաճ կերպով կվերանայվեն և կուսումնասիրվեն խիստ գաղտնիության պայմաններում: Անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն կարգապահական և ուղղիչ գործողություններ՝ քաղաքականության մեջ առկա ցանկացած հնարավոր թերությունը վերացնելու և հնարավոր խախտումները կանխելու համար: Որոշ խախտումների դեպքում ընկերությունը պետք է ներգրավի համապատասխան պետական կամ կարգավորող մարմիններին՝ հետաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Որպես Մենարինիի մաս՝ մենք պատասխանատու ենք ինքերս մեր, մեր գործընկերների և ընկերության առաջ՝ պահպանելով իր համբավը՝ որպես որակյալ արտադրանքի էթիկապես պատասխանատու և հուսալի մատակարար:

Կարգապահական տույժեր

Մենարինին յուրաքանչյուր ղեկավարից, աշխատակցից և բիզնես գործընկերից ակնկալում է պատշաճ էթիկական վարքագիծ, այնպես որ բոլոր Մասնակիցները պարտավոր են պահպանել սույն Կանոնագրքի պահանջները: Գործող օրենսդրության կամ սույն Կանոնագրքի ցանկացած խախտում կհանգեցնի համապատասխան կարգապահական պատասխանատվության: Կախված խախտման ծանրությունից կամ հաճախականությունից՝ կարող է կիրառվել բանավոր կամ գրավոր նկատողություն, պաշտոնից ազատում, կարգապահական փոքրաշրջան, դրամական տուգանք և/կամ Մենարինիի հետ աշխատանքային հարաբերությունների դադարում: Բացի այդ, սույն Կանոնագրքի պահանջները, Մենարինիի քաղաքականությունը և ընթացակարգերը չպահպանելը կարող է ազդել աշխատակցի առաջխաղացման և վարձատրության վրա, ներառյալ խրախուսումները կամ վարձատրությունը՝ ըստ աշխատանքի արդյունքների: Երրորդ կողմերի նկատմամբ կարող են կիրառվել պայմանագրով սահմանված պատժամիջոցներ՝ կախված խախտման ծանրությունից՝ այլ հատուկ դրույթներին համապատասխան:



Պաշտպանություն վրեժից

Մենարինին չպետք է բացասական գործողություններ ձեռնարկի այն անձի նկատմամբ, ով իրական տեղեկատվություն է տրամադրել օրենքի, Կանոնագրքի և ցանկացած այլ քաղաքականության և ընթացակարգի խախտումների վերաբերյալ: Իրավախախտումների մասին հայտարարած անձանց հետապնդումը անթույլատրելի է: Ցանկացած անձ, ով կկիրառի կամ կփորձի կիրառել բացասական գործողություններ, կպատժվի: Հետապնդման զոհերը պետք է անմիջապես զեկուցեն այդ մասին իրենց անմիջական ղեկավարին, Մարդկային Ռեսուրսների կամ Համապատասխանության Բաժնին՝ globalcompliance@menarini.com էլ. փոստի միջոցով:
Տեղեկացնում ենք, որ Մերանինին հավասարապես կարգապահական միջոցներ կձեռնարկի նրանց նկատմամբ, ովքեր գիտակցաբար կեղծ տեղեկություններ կտրամադրեն, ինչպես նաև կպաշտպանի նրանց, ովքեր անարդարացիորեն ներգրավված են եղել այդ գործում:

08

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կոնտակտային տվյալներ

Կապի հատուկ ուղիներ՝ խախտումների մասին արդյունավետ հաղորդմանը նպաստելու համար.

- Կայք
- Համապատասխանության կենտրոնական բաժին՝ globalcompliance@menarini.com

Կանոնագրքի վերաբերյալ հարցեր ունենալու կամ որևէ պարզաբանում ստանալու համար՝ խնդրում ենք դիմել.

- Ձեր անմիջական ղեկավարին
- Կադրերի բաժին
- Համապատասխանության բաժին

Ethical vision,
Integrity in action

MENARINI
group